Արձանագրություն № 2

ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմնի՝ խորհրդի հեռավար նիստի

2022 թվականի մայիսի 25-ին կայացավ ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմնի՝ խորհրդի հեռավար նիստը՝ խորհրդի 7 անդամների մասնակցությամբ:

Օրակարգ՝ 1. 2022թ. 1-ին եռամսյակի ֆինանսական հաշվետվությունների քննարկում:

(Զեկուցող Մ. Կոստանյան)

2. 2022թ. փոփոխված նախահաշվի քննարկում:

(Զեկուցող Մ. Կոստանյան)

Լսեցին 1. Դպրոցի գլխավոր հաշվապահ Մ. Կոստանյանին, որը ներկայացրեց 2022թ. 1-ին եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները:

Որոշեցին 1. Հավանություն տալ 2022թ. 1-ին եռամսյակի ֆինանսական գործունեությանը:

Լսեցին 2. Դպրոցի գլխավոր հաշվապահ Մ. Կոստանյանին, որը ներկայացրեց 2022թ. փոփոխված նախահաշիվը:

Որոշեցին 2. Հավանություն տալ դպրոցի 2022թ. փոփոխված նախահաշվին:

Խորհրդի նախագահ՝ (Ա. Խաչյան)

Խորհրդի քարտուղար՝ (Ա. Թումաղայան)

Արձանագրություն №1

2022 թվականի փետրվարի 9-ին կայացավ ՀՀ ԿԳՄՍՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմնի՝ խորհրդի հեռավար նիստը՝ խորհրդի 6 անդամների մասնակցությամբ:

Օրակարգ՝

1. Դպրոցի 2021-2022թթ. ուստարվա 2-րդ կիսամյակի տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակների քննարկում /զեկուցող Մ. Կոստանյան/

2. Դպրոցի 2022թ. ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի քննարկում /զեկուցող Մ. Կոստանյան/

3. Դպրոցի 2021թ. տարեկան ֆինանսական հաշվետվության քննարկում

/զեկուցող Մ. Կոստանյան/

Լսեցին

1. Դպրոցի գլխավոր հաշվապահ Մ. Կոստանյանին, որը ներկայացրեց 2021-2022թթ. ուստարվա 2-րդ կիսամյակի տարիֆիկացիոն և հաստիքայի ցուցակները:

Որոշեցին

1. Հավանություն տալ դպրոցի տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակներին:

Լսեցին

2. Դպրոցի գլխավոր հաշվապահ Մ. Կոստանյանին, որը ներկայացրեց 2022թ. ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը:

Որոշեցին

2. Հավանություն տալ դպրոցի 2022 թ. ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվին:

Լսեցին

3. Դպրոցի գլխավոր հաշվապահ Մ. Կոստանյանին, որը ներկայացրեց 2021թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

Որոշեցին

3. Հավանություն տալ դպրոցի 2021թ. տարեկան ֆինանսական հաշվետվությանը:

Խորհրդի նախագահ՝ /Ա. Խաչյան/

Խորհրդի քարտուղար՝ /Ա. Թումաղայան/

Արձանագրություն №10

ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմնի՝ խորհրդի հեռավար նիստի

2021 թվականի դեկտեմբերի 10-ին կայացավ ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմնի՝ խորհրդի հեռավար նիստը՝ խորհրդի 6 անդամների մասնակցությամբ:

Օրակարգ՝ 1.Դպրոցի 2021թ. փոփոխված նախահաշվի քննարկում:

/Զեկուցող՝ Մ. Կոստանյան/

Լսեցին 1. Դպրոցի գլխավոր հաշվապահ Մ. Կոստանյանին, որը ներկայացրեց դպրոցի 2021 փոփոխված նախահաշիվը:

Որոշեցին 1. Հավանություն տալ դպրոցի 2021 թվականի փոփոխված նախահաշվին:

Խորհրդի նախագահ՝ /Ա. Խաչյան/

Խորհրդի քարտուղար՝ /Ա. Թումաղայան/

Արձանագրություն № 9

ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմնի՝ խորհրդի նիստի

2021 թվականի հոկտեմբերի 25-ին կայացավ ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմնի՝ խորհրդի նիստը՝ խորհրդի 8 անդամների մասնակցությամբ: Նիստին ներկա էր ՀՀ ԿԳՄՄՆ ներկայացուցիչ Կ. Բաբայանը: Նիստը ձայնագրվում էր և արձանագրվում:

Օրակարգ՝ 1. Տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի գործընթացը

Լսեցին՝ 1. Կառավարման խորհրդի նախագահ Արմենուհի Խաչյանին: Նա ասաց, որ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթին մասնակցում է մեկ հավակնորդ՝ Կարինե Կարլենի Հովակիմյանը: Ա. Խաչյանը ներկայացրեց դպրոցի ծնողական և մանկավարժական խորհուրդների նիստերի արձանագրությունները՝ հրապարակելով փակ քվեարկությունների արդյունքները:

Համաձայն կարգի՝ Ա. Խաչյանը խոսքը տվեց Կ.Կ. Հովակիմյանին, որը ներկայացրեց իր «ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. ԵՐԶՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.118 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի 2021-2026 Թ.Թ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ»-ը:

Հավակնորդին ուղղվեցին հարցեր, հնչեցին պատասխաններ:

Համաձայն կարգի՝ տեղի ունեցավ բաց քվեարկություն: Քվեարկության արդյունքում Կ.Կ. Հովակիմյանը հավաքեց 8 «կողմ», 0 «դեմ» ձայներ:

Որոշեցին 1. ա) Կարինե Կարլենի Հովակիմյանին ճանաչել ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հաղթող:

բ) Դիմել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին մրցույթում հաղթող ճանաչված Կարինե Կարլենի Հովակիմյանի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու խնդրանքով:

Մինչև նիստի ավարտը խորհրդի նախագահը հավակնորդի ներկայությամբ հրապարակեց քվեարկության արդյունքները:

ՀՀ ԿԳՄՄՆ ներկայացուցիչ Կ. Բաբայանը ներկայացրեց եզրակացություն:

Խորհրդի նախագահ՝ /Ա. Խաչյան /

Խորհրդի քարտուղար՝ /Ա.Թումաղայան/

Արձանագրություն № 8

2021 թվականի սեպտեմբերի 17-ին կայացավ ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմնի՝ խորհրդի նիստը՝ խորհրդի 9 անդամների մասնակցությամբ:

Օրակարգ՝ 1. Տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին /զեկուցող՝ Ա.Խաչյան/

Լսեցին՝ 1. Դպրոցի կառավարման մարմնի՝ խորհրդի նախագահ Արմենուհի Խաչյանին, որը տեղեկացրեց, որ 2021 թվականի դեկտեմբերի 26-ին լրանում է «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կ. Հովակիմյանի պաշտոնավարման ժամկետը: Ա. Խաչյանն առաջարկեց, առաջնորդվելով ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 11 հ.161-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» և ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 27-ի հ. 1380-Ն որոշմամբ 2-րդ կետում կատարված փոփոխությունների պահանջներով՝ առավելագույնը 70 աշխատանքային օր առաջ, բայց ոչ պակաս, քան 66 աշխատանքային օր առաջ ընդունել որոշում տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:

Որոշեցին 1. ՀՀ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարել մրցույթ:

Խորհրդի նախագահ՝ /Ա. Խաչյան /

Խորհրդի քարտուղար՝ /Ա.Թումաղայան/

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7

ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմնի՝ խորհրդի նիստի

2021 թվականի սեպտեմբերի 13-ին կայացավ ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի հեռավար նիստը: Նիստին մասնակցում էին խորհրդի 7 անդամները, դպրոցի տնօրեն Կ. Հովակիմյանը և դպրոցի գլխավոր հաշվապահ Մ. Կոստանյանը:

Օրակարգ՝

1. Օրակարգի փոփոխության հարցը /զեկուցող՝ Կ. Հովակիմյան/
2. Տնօրենի հաշվետվությունը 2020-2021 ուստարում կատարած աշխատանքների մասին /զեկուցող՝ Կ. Հովակիմյան /
3. 2021-2022 ուստարվա հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները քննարկելու մասին հարցը /զեկուցող՝ Մ. Կոստանյան/
4. Տնօրենի թափուր տեղի համար մրցույթի գործընթացը կազմակերպելու մասին հարցը /զեկուցող՝ Ա. Խաչյան/
5. Աշխատողներին պարգևավճար տալու վերաբերյալ հարցը /զեկուցող՝ Կ. Հովակիմյան /

Լսեցին — 1.Դպրոցի տնօրեն Կ. Հովակիմյանը առաջարկեց օրակարգի փոփոխություն: Նա առաջարկեց օրակարգում ավելացնել ևս մեկ հարց՝ աշխատողներին պարգևավճար տալու վերաբերյալ:

Որոշեցին — 1. Հաստատել օրակարգի փոփոխությունը:

Լսեցին — 2. Դպրոցի տնօրեն Կ. Հովակիմյանին, որը ներկայացրեց տնօրենի հաշվետվությունը 2020-2021 ուստարում կատարած աշխատանքների մասին:

Որոշեցին — 2. Հավանություն տալ դպրոցի տնօրենի հաշվետվությանը 2020-2021 ուստարում կատարած աշխատանքների մասին:

Լսեցին — 3.Դպրոցի գլխավոր հաշվապահ Մ. Կոստանյանին, որը ներկայացրեց դպրոցի 2021-2022 ուստարվա հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները :

Որոշեցին — 3. Հավանություն տալ դպրոցի 2021-2022 ուստարվա հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին:

Լսեցին — 4. Խորհրդի նախագահ Ա. Խաչյանին, որը ներկայացրեց տնօրենի թափուր տեղի համար մրցույթի գործընթացի կազմակերպման անհրաժեշտությունը:

Որոշեցին — 4. Հավանություն տալ տնօրենի թափուր տեղի համար մրցույթի գործընթացի կազմակերպմանը:

Լսեցին	5. Դպրոցի տնօրեն Կ. Հովակիմյանին, որն առաջարկեց դպրոցի 2-րդ մասնաշենքի կոսմետիկ նորոգման և մաքրման աշխատանքներն իրականացրած աշխատակիցներին տալ պարգևավճար:
Որոշեցին	5. Դպրոցի 2-րդ մասնաշենքի կոսմետիկ նորոգման և մաքրման աշխատանքներն իրականացրած աշխատակիցներին տալ պարգևավճար:

Խորհրդի նախագահ՝ /Ա. Խաչյան/

Խորհրդի քարտուղար՝ /Ա. Թումանյան/

Արձանագրություն №6

2021 թվականի հուլիսի 27-ին կայացավ ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ ՀՀ ԿԳՄՄՆ նախարարի 2021 թ. հունիսի 25-ի №1017-Ա/2 հրամանով հաստատված կազմով խորհրդի նիստը: Նիստին մասնակցում էին խորհրդի 9 անդամները, դպրոցի տնօրեն Կ. Հովակիմյանը և դպրոցի գլխավոր հաշվապահ Մ. Կոստանյանը:

ՀՀ ԿԳՄՄՆ Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոցի կառավարման խորհրդի կազմը ներկայացված է ստորև՝

Էլոյան Սիրանուշ	ՀՀ ԿԳՄՄՆ ներկայացուցիչ
Նազարյան Նելլի	ՀՀ ԿԳՄՄՆ ներկայացուցիչ
Մխիթարյան Էլյա	ՀՀ ԿԳՄՄՆ ներկայացուցիչ
Ադամյան Ծովինար	ՀՀ ԿԳՄՄՆ ներկայացուցիչ
Ղարդաշյան Ժաննա	Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ
Խաչյան Արմենուհի	Դպրոցի մանկավարժական խորհրդի ներկայացուցիչ
Թումաղայան Աննա	Դպրոցի մանկավարժական խորհրդի ներկայացուցիչ
Վարդերեսյան Նաիրա	Դպրոցի խորհրդի ներկայացուցիչ
Մելքումյան Արփինե	Դպրոցի խորհրդի ներկայացուցիչ

Նիստը նախագահում էր տարիքով ավագ խորհրդի անդամ Էլյա Մխիթարյանը:

Օրակարգ՝

1. Խորհրդի նախագահի ընտրությունը՝ հաստատության կանոնադրության և խորհրդի ձևավորման կարգի համաձայն, խորհրդի աշխատակարգի հաստատում
2. Դպրոցի 2021 թ. առաջին կիսամյակի ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության քննարկում /զեկուցող՝ Մ.Կոստանյան /
3. Դպրոցի 2021 թ. Ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի փոփոխություն /զեկուցող՝ Մ.Կոստանյան /

Լսեցին

1. Էլյա Մխիթարյանին, որը ներկայացրեց խորհրդի անդամներին և առաջարկեց տալ խորհրդի նախագահի թեկնածություններ:

Արտահայտվեցին

1. Խորհրդի անդամ Ծ. Ադամյանը, որն առաջարկեց Ա. Խաչյանի թեքնածությունը:

Փակ գաղտնի քվեարկության արդյունքում 9 «կողմ» ձայնով ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նախագահ

ընտրվեց Արմենուհի Խաչյանը: Ա. Խաչյանը առաջարկեց ընտրել կառավարման խորհրդի քարտուղար: Ա. Մելքումյանը առաջարկեց Ա. Թումաղայանի թեքնածությունը:

Բաց քվեարկության արդյունքում 9 «կողմ» ձայնով ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի քարտուղար ընտրվեց Աննա Թումաղայանը:

Որոշեցին 1. Արմենուհի Խաչյանին հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նախագահի պաշտոնում:

Աննա Թումաղայանին հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի քարտուղարի պաշտոնում:

Լսեցին 2. Դպրոցի գլխավոր հաշվապահ Մ. Կոստանյանին, որը ներկայացրեց դպրոցի 2021 թվականի առաջին կիսամյակի ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը:

Որոշեցին 2. Հավանություն տալ դպրոցի 2021 թվականի առաջին կիսամյակի ֆինանսատնտեսական գործունեությանը:

Լսեցին 3. Դպրոցի գլխավոր հաշվապահ Մ. Կոստանյանին, որը ներկայացրեց դպրոցի 2021 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի փոփոխությունը:

Որոշեցին 3. Հավանություն տալ դպրոցի 2021 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի փոփոխությանը:

Խորհրդի նախագահ՝ /Ա. Խաչյան/

Խորհրդի քարտուղար՝ /Ա. Թումաղայան/

Արձանագրություն №5

2021 թվականի հունիսի 21-ին կայացավ ՀՀԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմնի՝ խորհրդի հեռավար նիստը՝ խորհրդի 6 անդամների մասնակցությամբ:

Օրակարգ՝

1. Կազմակերպության 2021թ. ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի փոփոխություն:

/ Զեկուցող Մ. Կոստանյան /

Լսեցին

1. Դպրոցի գլխավոր հաշվապահ

Մ. Կոստանյանին, ով ներկայացրեց, որ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Մարինե Բերբերյանը ստացել է որակավորման տարակարգ, ինչի կապակցությամբ կատարվել է 2021թ. ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի փոփոխություն:

Որոշեցին

1. Հավանության արժանացնել:

Խորհրդի նախագահ՝ /Մ.Գրիգորյան/

Խորհրդի քարտուղար՝ /Ա.Թումաղայան/

Արձանագրություն №4

2021 թվականի մայիսի 17-ին կայացավ ՀՀԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմնի՝ խորհրդի հեռավար նիստը՝ խորհրդի 6 անդամների մասնակցությամբ:

Օրակարգ՝ 1. Կազմակերպության 2021թ. ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի փոփոխություն:

/Զեկուցող Մ.Կոստանյան/

Լսեցին 1. Դպրոցի գլխավոր հաշվապահ

Մ. Կոստանյանին, ով նեկայացրեց, որ դպրոցում առկա համակարգիչների և դյուրակիր համակարգիչների մեջ (թվով 28 հատ) տարածվել է համակարգչային վիրուս,որը անհնարին է դարձրել դասապրոցեսի իրականացումը և մասնագետի միջամտության անհրաժեշտություն առաջացրել: Ելնելով գործի հրատապությունից, նշված մասնագետի ծառայության դիմաց վճարում կատարելու նպատակով պակասեցվել է վարչական սարքավորումների ձեռքբերման հոդվածից 200,0 հազ. դրամ,որը ավելացվել է մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում հոդվածին:

Որոշեցին 1. Հավանության արժանացնել:

Խորհրդի նախագահ՝ /Մ.Գրիգորյան/

Խորհրդի քարտուղար՝ /Ա.Թումաղայան/

Արձանագրություն № 3

2021 թվականի ապրիլի 26-ին կայացավ ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմնի՝ խորհրդի հեռավար նիստը՝ խորհրդի 7 անդամների մասնակցությամբ:

Օրակարգ՝

1. ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգը հաստատելու հարցը:
/Զեկուցող՝ Կ. Հովակիմյան/

2. ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 2021թ. 1-ին եռամսյակի ֆինանսական հաշվետվությունների քննարկումը:
/Զեկուցող՝ Մ. Կոստանյան/

3. 2021թ. փոփոխված նախահաշվի քննարկումը:
/Զեկուցող՝ Մ. Կոստանյան/

Լսեցին 1. Դպրոցի տնօրեն Կ. Հովակիմյանին, որը, հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թ. ապրիլի 15-ի № 28-Ն հրամանով հաստատված «Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը», ներկայացրեց ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգը և առաջարկեց հաստատել այն:

Որոշեցին 1. Հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգը:

Լսեցին 2. Դպրոցի գլխավոր հաշվապահ Մ.Կոստանյանին, որը ներկայացրեց ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 2021թ. 1-ին եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները:

Որոշեցին 2. Հավանություն տալ ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 2021թ. 1-ին եռամսյակի ֆինանսական հաշվետվություններին:

Լսեցին 3. Դպրոցի գլխավոր հաշվապահ Մ. Կոստանյանին, որը ներկայացրեց ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 2021թ. ճշտված նախահաշիվը:

Որոշեցին 3. Հավանություն տալ ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 2021թ. ճշտված նախահաշվին:

Խորհրդի նախագահ՝ Մ.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար՝ Ա. Թումաղայան

Արձանագրություն № 2

2021 թվականի մարտի 23-ին կայացավ ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմնի՝ խորհրդի հեռավար նիստը՝ խորհրդի 6 անդամների մասնակցությամբ:

Օրակարգ՝

1. ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգը հաստատելու հարցը (զեկուցող՝ Կ. Հովակիմյան)

Լսեցին

1. Դպրոցի տնօրեն Կ. Հովակիմյանին, որը, հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թ. փետրվարի 18-ի № 22 հրամանով հաստատված «Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը», ներկայացրեց ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգը և առաջարկեց հաստատել այն:

Որոշեցին

1. Հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգը:

Խորհրդի նախագահ՝ Մ.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար՝ Ա.Թումաղայան

Արձանագրություն №1

ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմնի՝ խորհրդի նիստի

2021 թվականի փետրվարի 9-ին կայացավ ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմնի՝ խորհրդի նիստը՝ խորհրդի 5 անդամների մասնակցությամբ:

Օրակարգ՝

1. Դպրոցի 2021թ. ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի քննարկում

(զեկուցող՝ Մ. Կոստանյան)

2. 2020-2021 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակների քննարկում

(զեկուցող՝ Մ. Կոստանյան)

Լսեցին

1. Դպրոցի գլխավոր հաշվապահ Մ. Կոստանյանին, որը ներկայացրեց դպրոցի 2021թ. ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը:

Որոշեցին

1. Հավանություն տալ 2021թ. ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվին:

Լսեցին

2. Դպրոցի գլխավոր հաշվապահ Մ. Կոստանյանին, որը ներկայացրեց 2020-2021 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակները:

Որոշեցին

2. Հավանություն տալ 2020- 2021 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակներին:

Խորհրդի նախագահ՝ (Մ.Գրիգորյան)

Խորհրդի քարտուղար՝ (Ա.Թումաղայան)